

**ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

**«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի  
նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-059-04.10.2021-ՖՎ, ԱՍ, ՏՀ, ԱռՀ, ՏՏԳՇ, ՏԵ, ՊԻ, ԱՀ,  
ՊԱ, ԳԿ, ԵԻ, ՄԻ-011/0) վերաբերյալ**

Կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-059-04.10.2021-ՖՎ, ԱՍ, ՏՀ, ԱռՀ, ՏՏԳՇ, ՏԵ, ՊԻ, ԱՀ, ՊԱ, ԳԿ, ԵԻ, ՄԻ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

**ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**ԼԻԴԻՅԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ**

25.10.2021թ.

## ***Փորձաքննության արդյունքները***

Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշեմք հետևյալը՝

1. Նախագծի վերևի աջ անկյունում նշված «ՆԱԽԱԳԻԾ» բառն ընդգծելու անհրաժեշտությունը բացակայում է՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասը:

2. Առաջարկում ենք Նախագծի 1-ին, 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածների մասերի և կետերի համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերին՝ հոդվածների մասերն ու կետերը համարակալելով արաբական թվանշաններով և համապատասխանաբար մասերի համարները տեքստից բաժանելով միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Նշված փոփոխության կատարման արդյունքում անհրաժեշտություն է առաջանում նաև համապատասխանեցնել Նախագծի մի շարք հոդվածներում կետերին և ենթակետերին արված հղումները, օրինակ՝ Նախագծի 7-րդ հոդվածում նշված «կետերով» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասերով» բառով, քանի որ Նախագծի 9-րդ հոդվածը պետք է բաժանվի համարակալված մասերի: Նույնական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջանում նաև Նախագծի 7-րդ հոդվածի 21-րդ մասում, 8-րդ հոդվածի 6-րդ մասում, 9-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետում, 6-րդ մասում, 12-րդ մասի «գ», «դ» ենթակետերում:

3. Նախագծի 4-րդ հոդվածում և ամբողջ տեքստում կիրառված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» բառերը համապատասխան հոլովաձևերով առաջարկում ենք փոխարինել «Կենտրոնական բանկ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ կիրառված հասկացությունները:

4. Նախագծի 5-րդ հոդվածում և մյուս հոդվածներում վկայակոչված օրենքների վերնագրերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:

5. Նախագծի 7-րդ հոդվածի 15-րդ մասում «23-րդ հոդվածի 1-ին կետին» բառերն առաջարկում ենք փոխարինել «23-րդ հոդվածի 1-ին մասին» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերը: Առաջնորդվելով նույն իրավական հիմքով՝ առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ, 7-

րդ, 8-րդ մասերում, 12-րդ մասի «գ» և «դ» ենթակետերում, ինչպես նաև 15-րդ մասում կիրառված «կետ» բառը փոխարինել «մաս» բառով՝ համապատասխան հոլովածներով:

***Եզրահանգում***

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը համապատասխանում է Սահմանադրությանը: Միաժամանակ, հաշվի առնելով Նախագծի առանձնահատկությունները, ներկայացված դիտարկումների հիման վրա, կարծում ենք, անհրաժեշտ է ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՋԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍՍԱՓՅԱՆ

22.10.2020թ.

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին**

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՋԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍՍԱՓՅԱՆ

22.10.2020թ.

## ***Ֆինանսատնտեսագիտական և սոցիալական փորձաքննության արդյունքները***

«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ) քննարկվել է ՀՀ ԱԺ աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության ֆինանսատնտեսագիտական փորձաքննության և սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժիններում:

Նախագիծը հիմնականում համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև բյուջետային հարաբերությունները կարգավորող մյուս օրենքներով սահմանված պահանջներին:

Նախագծի ուսումնասիրության և քննարկման արդյունքում ձևավորվել են մի շարք նկատառումներ, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում:

1. Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետի, բացատրագիրը պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը հիմնավորող փաստաթղթերի ամբողջություն է, որը ներառում է պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը՝ ըստ օրենքով սահմանված հարկային և այլ եկամտատեսակների: Նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պետական բյուջեի եկամուտների աղբյուրներն են հարկային եկամուտները, պետական տուրքերը, պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները, իսկ 2-րդ մասով ներկայացված են հարկային եկամուտները՝ ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտային հարկ և այլն: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ 2022 թվականի պետական բյուջեի ուղերձում բացակայում են առանձին հարկատեսակների գծով կանխատեսվող ցուցանիշներն ու դրանց հիմնավորումները, ինչպես նաև առաջիկա տարում պլանավորվող հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը պայմանավորող գործոնների մեկնաբանությունները: Մեր կարծիքով, նշված իրավիճակը ոչ միայն չի բխում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածների պահանջներից, այլև հակասում է բյուջետային ուղերձի տրամաբանությանն ու նպատակային նշանակությանը:

Որպես կանոն, հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը վերջին տարիներին հիմնականում պայմանավորված է եղել երեք հիմնական գործոններով՝ ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումներով, հարկային օրենսդրության փոփոխություններով և վարչարարական միջոցառումներով: Այս

առումով, 2022 թվականի բյուջետային ուղերձում առանձին հարկատեսակների գծով կանխատեսումների, ինչպես նաև հարկային եկամուտների ակնկալվող աճի բացվածքի և այն պայմանավորող գործոնների վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս լիարժեք և ամբողջական կերպով գնահատել և պատկերացում կազմել ինչպես հարկաբյուջետային ցուցանիշների փոփոխության միտումների, այնպես էլ պլանավորվող ցուցանիշների իրատեսականության և արժանահավատության վերաբերյալ: Հետևաբար, կարծում ենք, որ բյուջետային փաստաթղթի ամբողջականության ապահովումը ենթադրում է վերը նշված կանխատեսումների համակողմանի և մանրակրկիտ ներկայացում, ինչն էլ, ցավոք, բացակայում է:

2. Առաջիկա տարում հանրապետության տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով կանխատեսումները, կարծում ենք, կարելի է բավականաչափ հուսադրող համարել այն առումով, որ նկատվում է կորոնավիրուսային համավարակի և պատերազմական գործողությունների տնտեսական հետևանքների հաղթահարման միտումների ձևավորում, թեև մյուս կողմից՝ գնաճային ցուցանիշների աճը ստիպում է հատուկ ուշադրություն դարձնել տնտեսական աճի և հատկապես ՀՆԱ-ի աճի որակական կողմին (տես աղյուսակ 1-ը):

Մասնավորապես, ըստ ՀՀ կառավարության կանխատեսումների, անվանական ՀՆԱ-ն 2022 թվականին կկազմի մոտ 7.9 տրիլիոն դրամ, որը մոտ 12 տոկոսով գերազանցում է ընթացիկ տարվա կանխատեսվող մակարդակը (7.0 տրիլիոն դրամ) և 21.4 տոկոսով՝ նախորդ տարվա փաստացի մակարդակը (մոտ 6.2 տրիլիոն դրամ): Ըստ կանխատեսումների, զգալիորեն կակտիվանա նաև տնտեսական աճը, որը 2020 թվականի 7.4 տոկոս անկումից հետո 2021 թվականին կկազմի 6.5 տոկոս, իսկ 2022 թվականին՝ 7.0 տոկոս: Ինչպես կարելի է նկատել, ընթացիկ տարվա կանխատեսվող մակարդակից 2022 թվականի ցուցանիշը շատ չի տարբերվում, չնայած այս կանխատեսումների իրականացման պարագայում կարելի է արձանագրել, որ ՀՀ տնտեսությունն աստիճանաբար մտնում է հետճգնաժամային վերականգնողական փուլ, թեև նախաճգնաժամային մակարդակին այդպես էլ չի հասնում (2019 թվականին տնտեսական աճը կազմել է 7.6 տոկոս՝ 1.0 տոկոս ՀՆԱ-ի դեֆլյատորի պարագայում, իսկ 2017 թվականին՝ 7.5 տոկոս և այլն):

Աղյուսակ 1.

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների դինամիկան 2018-2022 թվականներին

	2018	2019	2020	2021	2022
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	6,017.0	6,543.3	6,181.7	7,031.2	7,869.4
Տնտեսական աճ (%)	5.2	7.6	-7.4	6.5	7.0
ՀՆԱ դեֆլյատորի աճ (%)	2.8	1.0	2.0	6.8	4.6
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ, %)	1.8	0.7	3.7	7.4	5.2
Գնաճ (միջին, %)	2.5	1.4	1.2	7.0	5.6

Նման զուսպ գնահատականի հիմքում ընկած են գնաճային ցուցանիշների համեմատաբար բարձր մակարդակները, որոնք էլ «թելադրում» են տնտեսական աճի որակական հիմնական բնութագիրը: Խնդիրը կայանում է նրանում, որ կանխատեսվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի դեֆլյատորը կկազմի 6.8 տոկոս՝ ընթացիկ տարում և 4.6 տոկոս՝ 2022 թվականին, իսկ գնաճը, ըստ կառավարության կանխատեսումների, էլ ավելի բարձր մակարդակ պետք է գրանցի՝ 2021 թվականին կազմելով միջինը 7.0 տոկոս (տարվա վերջին՝ 7.4 տոկոս), իսկ 2022 թվականին՝ 5.6 տոկոս (տարվա վերջին՝ 5.2 տոկոս): Սա նշանակում է, որ անվանական ՀՆԱ-ի աճը, նախաճգնաժամային տարիների համեմատությամբ, էականորեն պայմանավորված է լինելու նաև գնաճով, իսկ ՀՀ տնտեսությունն էլ ամբողջ տարվա ընթացքում պետք է գտնվի արտաքին և ներքին գնաճային ճնշումների տակ:

Տնտեսական աճի կանխատեսվող մակարդակի ապահովումն, այդուհանդերձ, որոշակի հիմք կհանդիսանա հետճգնաժամային փուլում տնտեսության վերականգնման ու զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման և հարկաբյուջետային ցուցանիշների բարելավման համար: Միաժամանակ, տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի ապահովումը, բացի համաճարակի հետագա տարածմամբ պայմանավորված իրավիճակից, կախված կլինի նաև երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունից, ինչպես նաև արտաքին տնտեսական գործոններից և համաշխարհային տնտեսության զարգացումներից: Ընդ որում, համաճայն Կառավարության գնահատումների, կորոնավիրուսի տարածման և տևողության անորոշությունների հետևանքով տնտեսական աճի ռիսկերը կլինեն առավելապես դեպի ներքև, ինչը, բնականաբար, իր համապատասխան անդրադարձը կունենա բյուջետային եկամուտների վրա: Կարծում ենք, նման իրավիճակում նպատակահարմար կլինեք նախատեսել եկամտի լրացուցիչ աղբյուրներ՝ տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի չապահովման դեպքում բյուջետային մուտքերի գծով «ճեղքվածքը» ծածկելու համար, քանի որ համավարակի հետ կապված անորոշությունները և ռիսկերը դեռևս պահպանվում են:

3. Համաձայն 2022 թվականի բյուջետային ուղերձի, առաջիկա տարում արդյունաբերությունը կաճի 8.0 տոկոսով, գյուղատնտեսությունը՝ 3.9 տոկոսով, ծառայությունների ոլորտը՝ 5.9 տոկոսով, շինարարության ոլորտը՝ 18.0 տոկոսով, իսկ զուտ հարկերը՝ 6.8 տոկոսով (տես աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2.

ՀՆԱ իրական աճն ըստ տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների  
2018-2022 թվականներին (տոկոսային արտահայտությամբ)

	2018	2019	2020	2021	2022
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր
ՀՆԱ	5.2	7.6	-7.4	6.5	7.0
Արդյունաբերություն	4.9	11.9	-1.7	4.3	8.0
Գյուղատնտեսություն	-6.9	-5.8	-4.1	5.6	3.9
Շինարարություն	0.6	6.5	-6.7	1.5	18.0
Ծառայություններ	9.1	10.0	-9.7	7.1	6.8
Զուտ հարկեր	8.0	7.1	-10.0	7.1	6.8

Ինչպես նկատում ենք աղյուսակ 2-ից, 2022 թվականին ամենաբարձր աճը կանխատեսվում է շինարարության և արդյունաբերության ոլորտներում, որը կկազմի համապատասխանաբար՝ 18.0 և 8.0 տոկոս: Կարծում ենք, նման միտումը բավականաչափ դրական է տնտեսական աճի ճյուղային կառուցվածքի բարելավման համար, սակայն բյուջետային ուղերձում այս առումով ընդամենը նշվում է, որ. «2021թ. տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների աճով, իսկ 2022թ. աճի արագացումը կապահովեն արդյունաբերության և շինարարության ճյուղերը: Տնտեսության մյուս ճյուղերը նույնպես դրական ազդեցություն կունենան տնտեսական աճի վրա: Ամբողջական պահանջարկը նույնպես կաճի՝ պայմանավորված ներքին պահանջարկի աճով:»: Այսինքն, թե հատկապես ի՞նչ գործոնների շնորհիվ կլինի նշված կտրուկ աճերը, ըստ էության, ոչ մի խոսք չի ասվում: Հարկ ենք համարում հիշեցնել, որ արդեն իսկ առաջին ընթերցմամբ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (Կ-004-17.08.2021-SՀ-011/1), ըստ որի դրանով նախատեսվող կարգավորումներն ուժի մեջ պետք է մտնեն 2022 թվականի հունվարի 1-ից, իսկ առաջիկա տարվա հուլիսի 1-ից հետո սկսելու է կիրառվել

ստացված հիպոտեկային վարկերի մասով տոկոսագումարների վերադարձման սահմանափակումների մասին դրույթները, ինչն, անշուշտ, շինարարության նկատմամբ պահանջարկի նվազման հստակ ազդակ կարող է դառնալ: Մյուս կողմից, շինարարության ծավալների խթանման կամ ընդհանուր առմամբ պահանջարկի ընդլայնման տեսանելի գործոններ ներկայումս չեն նկատվում, ինչն էլ ստիպում է որոշակի գգուշավորություն դրսևորել նշված կտրուկ աճի (18 տոկոս) նկատմամբ, ինչն էլ, կարծում ենք, դետալային բացատրության կարիք ունի:

Տնտեսության ճյուղային կառուցվածքի առումով, Կառավարության հիմնական առաջնահերթություններից մեկը, կարծում ենք, պետք է դառնա տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությանն ուղղված գործնական քայլերի իրականացումը: Մեր կարծիքով, իրականացվելիք տնտեսական քաղաքականության նպատակային թիրախներ պետք է դառնան հարկունակ ճյուղերի զարգացումը, միաժամանակ՝ համեստ դերակատարում վերապահելով հարկազատված ոլորտներին: Այլ կերպ ասած, կարևորելով հանդերձ երկրում տնտեսական աճի ապահովումը, միևնույն ժամանակ, պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի բարելավման ուղղությամբ, ինչը կնպաստի հարկային բեռի հնարավորինս օպտիմալ բաշխմանը և, դրանով իսկ, բյուջետային եկամուտների ավելացմանը:

4. Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1 տրիլիոն 946.4 մլրդ. դրամի չափով, 2021 թվականի սպասվող 1 տրիլիոն 656.9 մլրդ դրամի, 2020 թվականի փաստացի 1 տրիլիոն 560.7 մլրդ դրամի և 2019 թվականի փաստացի 1 տրիլիոն 565.5 մլրդ դրամի դիմաց: Այլ կերպ ասած, առաջիկա տարվա բյուջետային եկամուտների պլանավորված ծավալն ընթացիկ տարվա ցուցանիշը գերազանցում է 18.6 տոկոսով կամ 289.5 մլրդ դրամով (տես աղյուսակ 3-ը):

Աղյուսակ 3.

Բյուջետային եկամուտների աճի դինամիկան 2019-2022 թվականներին

Եկամտատեսակ (մլրդ դրամ)	2019թ. փաստացի (մլրդ դրամ)	2020թ. փաստացի (մլրդ դրամ)	2021թ. սպասում (մլրդ դրամ)	2022թ. կանխա- տեսում (մլրդ դրամ)



Ընդամենը եկամուտներ, որից՝	1,565.5	1,560.7	1,656.9	1,946.4
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,464.3	1,385.2	1,581.0	1,843.8
Պաշտոնական դրամաշնորհներ	12.4	53.2	23.9	40.3
Այլ եկամուտներ	88.8	122.2	52.0	62.1

Ակնկալվում է, որ 2022 թվականին հարկային բեռի ծանրությունը բնութագրող հիմնական՝ հարկային եկամուտներ և տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 23.4 տոկոս՝ ընթացիկ տարվա ծրագրային 22.5 տոկոսի, 2020 և 2019 թվականների փաստացի 22.4 տոկոսի դիմաց: Բնականաբար, նախատեսվում է նաև, որ 2022 թվականին բյուջետային մուտքերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը՝ 1 տրիլիոն 843.8 մլրդ. դրամ՝ 2021 թվականի ծրագրված 1,581.0 մլրդ. դրամի, 2020 թվականի և 2019 թվականի փաստացի մուտքերի համապատասխանաբար՝ 1 տրիլիոն 385.2 մլրդ. դրամի և 1 տրիլիոն 464.3 մլրդ. դրամի դիմաց:

Պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի համապատասխանաբար՝ 40.3 մլրդ. դրամը (ընդհանուրի 1.8%-ը) և 62.1 մլրդ. դրամը (ընդհանուր եկամուտների 3.2%-ը): Հարկ է նշել, որ պետական բյուջեի եկամտային կառուցվածքում էական փոփոխություններ չեն նկատվի, քանի որ հարկային եկամուտների և պետական տուրքերի տեսակարար կշիռն որոշ չափով (ընթացիկ տարվա սպասողականից 0.7%-ով) նվազմանը զուգահեռ մի փոքր կաճ են պաշտոնական դրամաշնորհների (0.2%-ով) և այլ եկամուտների (0.1%-ով) տեսակարար կշիռները, որոնք էլ կառուցվածքային առումով էական նշանակություն չեն կարող ունենալ:

5. Համաձայն Նախագծի, ինչպես արդեն նշեցինք, առաջիկա տարում 7.0 տոկոս տնտեսական աճի պարագայում կանխատեսվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության 23.4% մակարդակ (ընթացիկ տարվա համեմատ ընդամենը 0.9 տոկոսային կետով աճ), 2021

թվականին՝ 6.5 տոկոս տնտեսական աճի սպասողականի պարագայում կանխատեսվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության 22.5% մակարդակ (որը 2020 թվականի մակարդակը գերազանցում է 0.1%-ով), իսկ 2020 թվականին, չնայած փաստացի 7.4 տոկոս տնտեսական անկմանը, հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը փաստացի կազմել է 22.4%, այնպես ինչպես և 2019 թվականին՝ 7.6 տոկոս փաստացի տնտեսական աճի պայմաններում (տես աղյուսակ 4-ը):

#### Աղյուսակ 4.

##### ՀՀ 2020-2022 թվականների պետական բյուջեների եկամուտների կառուցվածքը

	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր
Տնտեսական աճ (%)	7.6	-7.4	6.5	7.0
Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը (%)	22.4	22.4	22.5	23.4

Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ հանրապետությունում առկա է հարկային եկամուտների հավաքագրման կայուն և թեկուզ ցածր, բայց աճի կայուն դինամիկա, ինչն էլ պետության հարկային քաղաքականության առումով և հարկային դրույքաչափերի անփոփոխության պարագայում իդեալականին մոտ պատկեր է իրենից ներկայացնում: Այսինքն, եթե միջինժամկետ հատվածում տեղի չեն ունեցել հարկային դրույքաչափերի բարձրացումներ կամ հարկային բազայի էական ընդլայնում (ինչը վերջին երեք տարիներին բնութագրական է եղել ՀՀ-ի համար), ապա միանգամայն տրամաբանական և հիմնավորված է պնդել, որ այս տարիների ընթացքում ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցությունը կարող էր աճել հիմնականում տնտեսական աճի, ստվերային շրջանառության կրճատման և հարկային վարչարարության բարելավման ազդեցությամբ: Սակայն վերը նշված տվյալների դինամիկան փաստում է, որ 2019 և 2020 թվականներին, համապատասխանաբար՝ 7.6% տնտեսական աճի և 7.4% տնտեսական անկման պարագայում փաստացի արձանագրվել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության միևնույն 22.4% մակարդակ, ընթացիկ և առաջիկա տարիների համար կանխատեսվում է, որ 6.5% և 7.0% տնտեսական աճի պարագայում սպասվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության համապատասխանաբար՝ 22.5% և 23.4% մակարդակ: Սա նշանակում է, որ տնտեսական աճի և հարկեր/ՀՆԱ հարաբերակցության փաստացի և կանխատեսված ցուցանիշների միջև գոյություն ունեցող կապերը, 2019-2022 թթ. ժամակահատվածի կտրվածքով, առնվազն տրամաբանական կապի մեջ չեն գտնվում, ուստի նկարագրված դինամիկան, կարծում ենք,

մանրամասն և փաստարկված բացատրության կարիք է գգում, ինչն էլ, ցավոք, բացակայում է պետական բյուջեի նախագծի բացատրագրում (ի դեպ, նման գնահատման նպատակ էր հետապնդում նաև սույն եզրակացության 1-ին կետում ներկայացված նկատառումը՝ հարկային եկամուտների մանրամասնեցված ներկայացման վերաբերյալ):

Միաժամանակ, հարկեր/ՀՆԱ ցուցանիշի հարաբերականորեն ցածր մակարդակն էականորեն սահմանափակում է պետության ծախսային պարտավորությունների ընդլայնման հնարավորությունները և, այս տեսանկյունից, առաջիկա տարիներին դրա աստիճանական բարձրացումը, կարծում ենք, պետք է դառնա ընդհանուր տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Ընդ որում, այն պետք է իրականացվի ինչպես համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի բարելավման, այնպես էլ տնտեսության հարկային ներուժի լիարժեք օգտագործման և հատկապես ստվերային հատվածի կրճատման ուղղություններով:

Այս առումով, կարծում ենք, որ հանրապետությունում իրականացվելիք տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը, այլև տնտեսական աճի կառուցվածքի և որակի բարելավմանը՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով հարկունակ ճյուղերի զարգացման վրա:

6. Հարկային ծախսերը գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտները կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսերն են, քանի որ հարկային ծախսերը հանգեցնում են համապատասխան գումարի չափով բյուջետային ծախսերի կրճատման: Հարկային ծախսերի գնահատումը շատ կարևոր նշանակություն ունի ոչ միայն պետական բյուջեի ծրագրավորման, այլև հարկային քաղաքականության մշակման, իրականացման և համապատասխան ճշգրտումների կատարման տեսանկյունից, ուստի հարկային ծախսերի հաշվետվության, որպես ինստիտուտի, ներդրման և շարունակական թարմացման գործընթացը բացառիկ կարևորություն է ստանում:

Սույն Նախագծի կազմում ներկայացված հարկային ծախսերի հաշվետվությունը բյուջետային գործընթացի շրջանակներում հարկային ծախսերի գնահատման թվով ութերորդ հաշվետվությունն է, թեև առաջին անգամ է, որ այն ներկայացվում է առանձին վերլուծության միջոցով: Մյուս կողմից, հարկային ծախսերի մասին այսպիսի փաստաթղթի կազմումը իսկապես հնարավորություն կընձեռի առավել համապարփակ ձևով գնահատել գործող հարկային արտոնությունների արդյունավետությունը, դրանց հետագա կիրառության

նպատակահարմարությունը կամ հարկային արտոնությունները կրճատելու հնարավորություններն ու սահմանափակումները:

Հարկ ենք համարում հատուկ շեշտել նաև, որ ի տարբերություն նախորդ տարիներին ներկայացված հաշվետվությունների, սույն հաշվետվության առումով կատարվել են մեթոդաբանական որոշակի ճշգրտումներ՝ ելնելով միջազգային փորձից: Մասնավորապես, հաշվետվության մեթոդաբանության հիմքում դրված են ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի (հարկունակ և ոչ հարկունակ մասերի) ուսումնասիրության մակրոտնտեսական մոտեցումները, 2020 թվականին վերաբերող ԱԱՀ-ի, շահութահարկի և շրջանառության հարկի հաշվարկներով՝ ԱԱՀ-ի և շահութահարկի արտոնությունների, ինչպես նաև ԱԱՀ-ով հարկվող շեմի ուսումնասիրության արդյունքները:

Հաշվետվության կազմման համար ընտրվող մեթոդաբանության տեսանկյունից շատ կարևոր է նաև «Հարկային ծախս» հասկացության հստակ սահմանումը և հարկային ծախսերի շրջանակի ճիշտ որոշումը: Այս առումով, հատկանշական է այն, որ գործող հարկային օրենսդրությամբ նախատեսված՝ հարկման արտոնյալ պայմաններ ենթադրող ոչ բոլոր կարգավորումներն են դիտարկվել որպես հարկային ծախսեր (օրինակ՝ եկամտային հարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող եկամուտները)՝ անգամ եթե դրանց կիրառության արդյունքում կրճատվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերը: Հարկային ծախսերի շրջանակի որոշման համար հաշվի է առնվել «Հենանիշային հարկ» հասկացությունը, որն իրենից ներկայացնում է հարկերի այն հանրագումարը, որը կվճարվեր պետական բյուջե տնտեսության մեջ ձևավորվող ողջ հարկման բազան հարկելու պարագայում: Այս համատեքստում հարկային ծախսերը որոշվել են որպես հենանիշային հարկերի և փաստացի պետական բյուջե վճարվող հարկերի տարբերություն (որն ընդունված մոտեցում է նաև միջազգային պրակտիկայում, թեև այդ նույն պրակտիկայում հենանիշային հարկերի կամ այլ կերպ ասած՝ հարկային նշաճողի միասնական կամ սպառիչ սահմանում չկա): Այս առումով, անկախ այն հանգամանքից թե մեթոդաբանական առումով ընդունելի կամ վիճելի կարելի է համարել որդեգրված մոտեցումը, կարծում ենք, շատ կարևոր է այսուհետ միասնական մեթոդական բազային հիման վրա կատարված հարկային ծախսերի գնահատման հաշվետվությունների ներկայացումը և համադրելի տվյալների շարքերի ձևավորումը, որի հիմքն էլ կդրվի 2022 թվականից:

Սույն հաշվետվության շրջանակներում, ըստ կառավարության, գնահատվել են ավելացված արժեքի հարկին, շահութահարկին և եկամտային հարկին վերաբերող հիմնական

(ընդգրկուն) հարկային արտոնությունների ու ավելացված արժեքի հարկի չհարկվող շեմի կիրառության հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտները՝ կատարվող ուսումնասիրություններն ու գնահատականներն առավել ընդգրկուն և տարբերակված լինելու նպատակով, ընդլայնվել են նաև գնահատվող ԱԱՀ-ի և շահութահարկի հարկային արտոնությունների տեսակները, այդ թվում՝ հիմնվելով հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկներով արտացոլված տվյալների վրա: Այսինքն, փորձ է արվել հարկային ծախսերի կառուցվածքում ընդգրկել հարկային արտոնությունների հնարավորինս լայն շրջանակ, ինչն էլ, սկզբնական շրջանի համար, կարծում ենք, միանգամայն արդարացված մոտեցում է:

Այսպիսով, հաշվի առած նկարագրված մեթոդաբանական հիմքը, ընդհանուր հարկային ծախսը գնահատվել է 503,301 մլն. դրամի չափով, ինչը 2022 թվականի համար կանխատեսված հարկային եկամուտների և ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 27.3 և 6.4 տոկոս (տես աղյուսակ 5-ը):

Աղյուսակ 5.

Հարկային ծախսերի գնահատականը 2022 թվականին (մլն. դրամ)

Հ/Հ	Հարկային ծախսերի տեսակը	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
1	<b>ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝</b>	363,296	19.70%	4.62%
1.1.	գյուղատնտեսություն	18,444	1.00%	0.23%
1.2.	առողջապահություն	77,801	4.22%	0.99%
1.3.	կրթություն	28,521	1.55%	0.36%
1.4.	ֆինանսներ և ապահովագրություն	69,255	3.76%	0.88%
1.5.	ԱԱՀ-ի շեմ	47,655	2.58%	0.61%
1.6.	խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում	44,589	2.42%	0.57%

1.7.	ոսկու և քանկարժեք քարերի իրացում	3,783	0.21%	0.05%
1.8.	մարդասիրական օգնություն	4,471	0.24%	0.06%
1.9.	պարարտանյութերի իրացում	5,043	0.27%	0.06%
1.10.	ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում	1,977	0.11%	0.03%
1.11.	սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում	1,011	0.05%	0.01%
1.12.	ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում	169	0.01%	0.00%
1.13.	Օրենսգրքով սահմանված վերը չնշված այլ արտոնություններ	47,412	2.57%	0.60%
1.14.	այլ օրենքներով տրված արտանություններ	335	0.02%	0.00%
1.15.	Միկրոբիզնես	12,830	0.70%	0.16%
2	<b>Շահութահարկի գծով, այդ թվում՝</b>	78,931	4.28%	1.00%
2.1.	գյուղատնտեսություն, այդ թվում՝	51,757	2.81%	0.66%

2.1.1.	կազմակերպությունների շահույթից	3,103	0.17%	0.04%
2.1.2.	ֆիզիկական անձանց (Ա/Ձ-ների) շահույթից	48,653	2.64%	0.62%
2.2.	հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության	3,864	0.21%	0.05%
2.3.	շահութահարկի նվազեցման արտոնություններ	36	0.00%	0.00%
2.4.	ԱԱՀ-ի շեմ	17,156	0.93%	0.22%
2.5.	Միկրոբիզնես	4,619	0.25%	0.06%
2.6.	SS ոլորտի արտոնություններ	1,500	0.08%	0.02%
3	<b>Եկամտային հարկի գծով, այդ թվում՝</b>	<b>61,075</b>	<b>3.31%</b>	<b>0.78%</b>
3.1.	գյուղատնտեսության ոլորտի աշխատողների աշխատավարձ	14,141	0.77%	0.18%
3.2.	Միկրոբիզնես	4,838	0.26%	0.06%
3.3.	Հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վերադարձված եկամտային հարկ	38,005	2.06%	0.48%
3.4.	SS ոլորտի արտոնություններ	4,091	0.22%	0.05%
<b>Ընդամենը</b>		<b>503,301</b>	<b>27.30%</b>	<b>6.40%</b>

Հարկային ծախսերի տարեկան մեծությունը 2022 թվականին (503,301 մլն. դրամ), 52,226 մլն. դրամով կամ 11.6 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Ավելացված արժեքի հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 363,296 մլն. դրամ, ինչը 365 մլն. դրամով կամ 0.1 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Շահութահարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 78,931 մլն. դրամ, ինչը 7,192 մլն. դրամով կամ 10.0 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Այս գնահատականում ներառված է նաև 1,500 մլն. դրամի չափով SS ոլորտի արտոնությունների գնահատականը, որը ներառված

չի եղել նախորդ գնահատականում: Եկամտային հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 61,075 մլն. դրամ, ինչը 44,669 մլն. դրամով կամ 2.7 անգամ ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Այս գնահատականում ներառված է նաև 4,091 մլն. դրամի չափով ՏՏ ոլորտի արտոնությունների և 38,005 մլն. դրամի չափով հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վարկառուներին և համավարկառուներին վերադարձված եկամտային հարկի գումարների գնահատականները, որոնք ներառված չեն եղել նախորդ տարիների գնահատականում:

Անշուշտ, հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը բավականաչափ մեծ ծավալ է կազմում՝ հատկապես ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում: Ընդ որում, հատկապես մտահոգիչ է այն իրողությունը, որ դրանց ծավալները վերջին տարիներին արձանագրում են աճի կայուն միտումներ:

Այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է վերաիմաստավորել հարկային արտոնությունների դերն ու նշանակությունը հարկային կարգավորման գործում և ստեղծել այնպիսի նախադրյալները, որոնց առկայության պարագայում միայն դրանք կապահովեն անհրաժեշտ սոցիալ-տնտեսական էֆեկտ, մասնավորապես՝ անհրաժեշտ է ապահովել հարկային արտոնությունների առավելագույն հասցեականություն և բացառել տարբեր եղանակներով դրանցից անհիմն օգտվելու հնարավորությունը, իրականացնել հարկային ծախսերի չափի և ստացված սոցիալ-տնտեսական էֆեկտի համադրում՝ դրանց արդյունավետության գնահատման և չիմնավորված արտոնություններից հրաժարման նպատակով: Բացի այդ, հաշվի առնելով նաև հանրապետությունում ներկայումս ձևավորված հարկային ծախսերի ծավալը, կարծում ենք, ժամանակն է իրականացնել գործող հարկային արտոնությունների համակողմանի վերլուծություն դրանց տեսակներից յուրաքանչյուրի հիմնավորվածության, արդարացիության և սոցիալական ու տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից:

7. Առաջիկա բյուջետային տարում պետական բյուջեի ծախսային մասը կկազմի 2 տրիլիոն 189.2 մլրդ. դրամ, ինչն ընթացիկ տարվա հաստատված ցուցանիշը գերազանցում է 338 մլրդ. դրամով: Ինչ վերաբերում է բյուջետային ծախսերի կառուցվածքին, ապա ծախսերի ամբողջ ծավալի 84.2%-ը կամ 1,842.7 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 15.8%-ը կամ 346.5 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով գուտ ծախսերին:



Առաջիկա տարում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և պահուստային ֆոնդերի ոլորտին ուղղվելիք միջոցները նախատեսվել են շուրջ 99,938.4 մլն. դրամով ավել՝ համեմատած 2021 թվականի հետ: Ոլորտին ուղղվելիք հատկացումների աճը հիմնականում պայմանավորված է հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերի՝ 2021 թվականի համեմատ շուրջ 64,740.3 մլն դրամ հավելյալ ֆինանսավորմամբ:

Նախագծով նախատեսվում է նաև պաշտպանության, հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության ոլորտին հատկացվելիք միջոցների աճ՝ 2021 թվականի համեմատ շուրջ 50,049.1 մլն դրամի չափով, որը կկազմի 518.9 մլրդ. դրամ և հիմնականում կուղղվի ռազմական պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության, ազգային անվտանգության, դատական գործունեություն և իրավական պաշտպանության ապահովմանը:

Տնտեսական ոլորտին հատկացվող ծախսերի ընդհանուր ծավալն առաջիկա տարում կկազմի 240.1 մլրդ դրամ, որը մոտ 65.6 մլրդ դրամով ավել է ընթացիկ տարվա ծրագրված ցուցանիշից (կազմելով ընդհանուր ծախսերի 11.0 տոկոսը), իսկ սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում ամենամեծն է՝ 42.5 տոկոս, որը դրամային արտահայտությամբ կազմում է 929 մլրդ 399.1 մլն դրամ:

8. Սոցիալական բնագավառի ծախսերը, ընդհանուր առմամբ, 2022 թվականին հիմնականում կպահպանեն նախորդ տարիներին ձևավորված միտումները (տե՛ս աղյուսակ 6-ը): Մասնավորապես, 2018-2022թթ. ժամանակահատվածում կրթության և առողջապահության ոլորտների ֆինանսավորումը ՀՆԱ նկատմամբ փոփոխական բնույթ է կրել: 2022թ. համար այս ոլորտների բյուջետային ծախսերի չափաքանակները սահմանելիս առաջնային է դիտարկվել նշված ոլորտների համար ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի առաջանցիկ մակարդակի ապահովումը:

9. 2018-2021թթ. ընթացքում կրթության ոլորտին ուղղված պետական միջոցները կազմել են համապատասխանաբար 121,626.5, 129,336.3, 143,796.3 և 153,593.3 մլն. դրամ: 2022թ. ոլորտի ֆինանսավորման համար հատկացվելիք 192,759.2 մլն. դրամը նախատեսվում է համամասնորեն ուղղել կրթության առանձին տեսակների՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն, հետբուհական, ինչպես նաև կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ֆինանսավորմանը: ԵՄ աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման նպատակով պլանավորվում է ծախսել 6,048.1 մլն. դրամ:

## Սոցիալական ոլորտի 2018-2022թթ. բյուջետային ծախսերը (մլն. դրամ)

Ցուցանիշները	2018թ. փաստ	2019թ. փաստ	2020թ. փաստ	2021թ. ծրագիր	2022թ. նախագիծ
<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ ԸՆԴԱՍԵՆԸ</b>	643,132.58	716,099.00	872,233.8	806,603.02	929,399.1
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	10.7%	10.9%	14.1%	12.6%	11.8%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	44.4%	43.9%	46.0%	43.6%	42.5%
այդ թվում՝					
<b>1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>	121,626.5	129,336.3	143,796.3	153,593.3	192,759.2
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.0%	2.0%	2.3%	2.4%	2.5%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.4%	7.9%	7.6%	8.3%	8.8%
<b>2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	416,625.8	453,921.2	546,575.7	504,875.9	581,419.8
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	6.9%	6.9%	8.8%	7.9%	7.39%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	28.8%	27.9%	28,8%	27.3%	26.6%
<b>3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>	79,574,1	99,283,0	148,236.7	117,548.5	122,715.7
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.3%	1.5%	2.3%	1.8%	1.56%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	5.5%	6.1%	7.8%	6.4%	5.6%
<b>4. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ</b>	25,306.0	33,558,3	33,625.0	30,585.0	32,504.2
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.4%	0.5%	0.2%	0.5%	0.41%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.7%	2.1%	1.8%	1.7%	1.5%

10. Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2018-2021թթ. համապատասխանաբար կազմել է 79,574,1, 99,283,0, 148,236.7 և 117,548.5 մլն. դրամ: 2022թ. ոլորտին ուղղվող ծախսերը նախորդ տարվա հանմատ ավելացել են 5,167,2 մլն. դրամով և պլանավորվում են 122,715.7 մլն. դրամի չափով, որոնք, հաշվի առնելով 2020-2021թթ. համավարակով պայմանավորված առողջապահության համակարգի համաշխարհային արդի մարտահրավերներն, առաջնահերթ ուղղվելու են վերջինիս դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը, հանրությանը պատվաստանյութերով ապահովմանը, առողջապահական համակարգի ռիսկերին արագ և համարժեք արձագանքմանը: Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթությունների, առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2022 թվականին ուղղվելու է նաև մարզային առողջապահական կազմակերպությունների շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավման աշխատանքների իրականացմանը:

11. 2018-2021թթ. սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումն աճողական բնույթ է կրել՝ համապատասխանաբար կազմելով 416,625.8, 453,921.2, 546,575.7 և 504,875.9 մլն. դրամ: 2022 թվականի այս միտումը շարունակվելու է և պետական բյուջեի նախագծով այս ոլորտին նախատեսվում է հատկացնել 581,419.8 մլն. դրամ, որը, ինչպես և դիտարկվող տարիների ընթացքում, առաջնահերթ ուղղվելու է տարեցների և հաշմանդամների աջակցության տրամադրմանը, ինչպես նաև գործազրկության, սոցիալական հատուկ արտոնությունների, բնակարային ապահովման, ընտանեկան նպաստների տրամադրման և այլ սոցիալական ծառայությունների ապահովմանը: Բացի այդ, ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով սահմանված առաջնահերթություններից ելնելով, ոլորտի հատկացումները ուղղվելու են ծնելիության խթանմանը և բազմազավակ ընտանիքներին պետական աջակցության ցուցաբերմանը:

12. Նախագծով 2022 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 3.1 տոկոսի չափով և կազմում է մոտ 243.0 մլրդ. դրամ՝ շարունակելով պահպանել ՀՀ պետական բյուջեի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից՝ արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից (տես աղյուսակ 7-ը):

Արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվելիք միջոցները, որոնք դրամական արտահայտությամբ 2022 թվականին կկազմեն մոտ 133.0 մլրդ դրամ (ինչը համապատասխանում է ծախսերի ամբողջ ծավալի 6.0%-ին և ՀՆԱ-ի 1.7%-ին, բավականին կտրուկ աճ են նախատեսում գրանցել ընթացիկ տարվա

համեմատությամբ՝ աճելով մոտ 43.6 մլրդ դրամով, ինչն էլ, բնականաբար, իր ազդեցությունը կունենա ՀՀ պետական պարտքի ցուցանիշների վրա:

**Աղյուսակ 7.**

**Արտաքին աղբյուրներից 2022թ. ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհների) հաշվին ֆինանսավորվող ծախսերը**

Ցուցանիշները	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլն դրամ)	69,364.1	76,301.5	161,535.7	86,707.3	132,972.0
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.2%	1.2%	2.6%	1.4%	1.7%
տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	4.8%	4.7%	8.9%	4.7%	6.0%

Նշենք նաև, որ այս միտումը, բացառությամբ ընթացիկ տարվա, ունեցել է աճի բավականին մեծ տեմպեր: Վերջին հինգ տարիների ընթացքում արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվելիք միջոցների ծավալները նախատեսվում է ավելացնել ավելի քան 1.9 անգամ՝ 69.4 մլրդ դրամից հասցնելով 132 մլրդ 972 մլն դրամի:

Նշենք նաև, որ 2022 թվականին պետական բյուջեի դեֆիցիտի գուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 349.1 մլրդ դրամ, ինչը կիրականացվի պետական զանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 250.0 մլրդ դրամ, արտաքին վարկերի հաշվին՝ 99.1 մլրդ դրամ, իսկ արտարժույթային պետական պարտատոմսերի հաշվին մուտքեր չեն նախատեսվել:

13. Ըստ կանխատեսումների՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կառավարության պարտքը կկազմի 4,740 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 60.2 տոկոսը և 2021 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի 0.5 տոկոսային կետով (տես աղյուսակ 8-ը):

## ՀՀ պետական պարտքը 2020-2022 թթ.

	առ 31.12.2020թ.	առ 31.12.2021թ.	առ 31.12.2022թ.
<b>Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ*</b>			
ներքին պարտք	998	1,209	1,469
արտաքին պարտք	2,926	3,065	3,272
<b>Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ</b>			
արտաքին վարկեր և փոխառություններ	2,438	2,242	2,421
պետական գանձապետական պարտատոմսեր	959	1,168	1,428
արտարժույթային պետական պարտատոմսեր	523	860	887
արտաքին երաշխիքներ	4	4	4
ներքին երաշխիքներ	-	-	-
<b>Արժույթային կառուցվածքը, մլրդ դրամ</b>			
ՀՀ դրամով ներգրավված պարտք	959	1,168	1,428
արտարժույթով ներգրավված պարտք	2,965	3,106	3,312
<b>Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ</b>			
լողացող տոկոսադրույքով	769	749	818
ֆիքսված տոկոսադրույքով	3,155	3,524	3,922

*\* 2021 և 2022 թվականների համար պետական գանձապետական և արտարժույթային պարտատոմսերի գծով պարտքի մնացորդը բաշխվել է ըստ ռեզիդենտության հիմք ընդունելով 2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ փաստացի ձևավորված տեսակարար կշիռները:*

Նշենք, որ Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումները տարբերվում են Կառավարության պարտքի կառավարման 2022-2024 թվականների միջնաժամկետ ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշներից՝ պայմանավորված գլխավորապես կանխատեսումներում կիրառված մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակի, փոխարժեքների տարբերություններով ու Կառավարության պարտքի գծով

գործառնություններով: Նախատեսվում է 2021-2022 թվականներին Կառավարության պարտքի կառուցվածքում ավելացնել ՀՀ դրամով տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը, որն ըստ կանխատեսումների կկազմի համապատասխանաբար 2.9% և 2.8%:

Համաձայն ՀՀ կառավարության կանխատեսումների՝ 2022 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող Կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը, 2022 թվականին Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի -5.0%, իսկ Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 2.7%-ը:

2022 թվականին Կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 517.2 մլրդ դրամ, որից 302.8 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 214.4 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ինչպես 2021թ թվականին, այնպես էլ առաջիկա տարում պետական պարտքը կգերազանցի ՀՆԱ-ի 60 տոկոսը, ինչը պարտքային տեսանկյունից բավականաչափ բարձր ցուցանիշ է:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատարողներ՝

բաժնի պետ Ա. Թամազյան (հեռ.՝ 011 513-668)

գլխավոր մասնագետ Ա. Գալստյան (հեռ.՝ 011 513-235)

15.10.2020թ.